




ՀՈԿՏ. Տ. ՂԵՒՈՆԴ ԱՐԴ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգշ. Տ. Ղեւոնդ Արեղայ Յովհաննիսեան, աւագանի անունով Միսակ, ծնած է Երեւան 1972ին: Զաւակն է Ռուբէն եւ Նաթալիա Յովհաննիսեաններու: 1979էն մինչեւ 1989 ուսանած է Երեւանի միջնակարգ դպրոցի մէջ: 1989էն 1992 ուսանած է Երեւանի «Ռատիօ-Ելեկտրակապի» բարձրագոյն վարժարանի մէջ: 1991էն 1997 աշխատած է Երեւանի «ARMENTEL» միաւորման հաստատութեան մէջ:

1995էն 1997 ծառայել է Երեւանի Ս. Յովհաննէս եւ Ս. Զօրաւոր եկեղեցիներուն մէջ:

1997 թուականին ընդունուած է ուսանող Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ալէքս եւ Մարի Մանուկեան ընծայարան: 1999 թուականին կը ձեռնադրուի սարկաւագ, 6 Օգոստոս 2000ին, Գրիստոսի Այլակերպութեան Տօնին, կուսակրօն քահանայ ձեռամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր: